

ՔԱՂՎԱԾՔ

ԳՊՄԻ-ի ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի 2014թ. նոյեմբերի 12-ի խորհրդի թիվ 5 արտահերթ նիստի արձանագրությունից՝

ՕՐԱԿԱՐԳ

1. Մարզի ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների կազմակերպման հարցը:
2. Ներքին իրավական ակտերի վերաբերյալ քննարկում:

Լսեցին՝

1. Մարզի ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների կազմակերպման մասին հարցը:

Հաղորդեց՝ Ա.Խաչատրյան:

Արտահայտվեցին՝ Ա.Մաթևոսյանը, Բ.Սերոբյանը, Կ.Հովհաննիսյանը, Ա.Մարտիրոսյանը:

Որեջեցին՝ ներկայացնել միջոցառումների հետևյալ ցանկը՝

№	Միջոցառման տեսակը	Դպրոց(ներ)ը	Իրականացման ժամկետը	Պատասխանատուները
1.	Հանդիպում մարզի ավագ դպրոցների աշակերտների հետ	Գյումրու թիվ 3,12,45,33,37 դպրոցներ, Ֆոտոն, Բալատոն, Ակադեմիական վարժարաններ	փետրվար-մարտ	Ա.Խաչատրյան, Բ.Սերոբյան, Կ.Հովհաննիսյան
2.	Հանդիպում մանկապատանեկան մարզադպրոցների սաների հետ	քաղաքապետարանի մարզադպրոցներ, հանրապետական մարզադպրոցներ	ապրիլ-մայիս	Ա.Խաչատրյան, Բ.Սերոբյան, Արտ.Խաչատրյան, Ա.Մաթևոսյան
3.	Մանկավարժական պրակտիկաների ընթացքում մարզական -մասսայական, ռազմամարզական միջոցառումների կազմակերպում և դրանց անցկացումը ԳՊՄԻ մարզաբազաներում	ԳՊՄԻ մարզաբազաներ	ապրիլ-մայիս	պրակտիկաների ղեկավարներ
4.	Դպրոցներում «Առողջ ապրելակերպ» -ի թեմայով դասախոսություններ		փետրվար-մարտ	Գ.Աղանյան
5.	Դպրոցներում «Ռազմահայրենասիրական դաստիարակության» թեմաներով դասախոսություններ		փետրվար-մարտ	Կ.Հովհաննիսյան, Վ.Մուրադյան

Լսեցին՝

2. Ներքին իրավական ակտերի վերաբերյալ քննարկում:

Հաղորդեց՝ Ա.Խաչատրյանը:

Արտահայտվեցին՝ Ա.Մաթևոսյանը, Ե.Տոնոյանը, Բ.Սերոբյանը, Գ.Աղանյանը, Ա.Մարտիրոսյանը:

Որեշեցին՝

1. Անտական աշխատանքների կազմակերպման ընթացակարգ՝

- Ուսումնական պլաններով անհատական աշխատանքների թիվը մեկ կիսամյակում հասնում է մինչև 7-ի, այդ պատճառով նպատակահարմար ենք գտնում անհատական աշխատանքների թիվը կրճատել հասցնելով մինչև 2-ի, թողնելով միայն հատուկ մասնագիտական առարկաներ, դուրս գալով առարկայի առաջնահերթությունից:
- Անհատական աշխատանքների նկատմամբ պահանջները շատ խստացված են:
- Գործնական առարկաներից չկատարել անհատական աշխատանքներ:

2. Ուսանողների ավարտական աշխատանքների կազմակերպման ընթացակարգ՝

Ուսանողների ավարտական աշխատանքների կազմակերպման ընթացակարգի վերաբերյալ դիտողություններ չկան, սակայն որակյալ աշխատանքներ կատարելու համար ունենք մասնագիտական գրականության խիստ պակաս:

3. «Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ակադեմիական խորհրդատուների գործունեության կարգ՝

1. Ակադեմիական խորհրդատուների գործունեության կարգի վերաբերյալ ընդհանուր առմամբ դիտողություններ չկան, բայց խնդրում ենք պարզաբանել հետևյալ կետերը՝

- Ղեկավարել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- Համակարգել ուսանողի թղթապանակի կազմակերպման աշխատանքը:

2. Առաջարկվում է, որ ավագ խորհրդատուն լինի ամբիոնի վարիչը, քանի որ ինքն է համակարգում ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքները:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ դոցենտ Ա.Խաչատրյան

քարտուղար՝

Վ.Գրիգորյան